



Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի օրհնությամբ և Աջարիայի, Գուրիայի, Իմերեթիի հայության և Բաթումի Սուրբ Փրկիչ Եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Արարատ քահանա Գումբալյանի հրավերով, 2017 թվականի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 4-ը Արթիկի թեմի շուրջ 20 պարմաններ և պարմանուհիներ իրենց ամառային հանգիստն անցկացրեցին գեղատեսիլ Բաթումիում:

Արթիկ քաղաքից և շրջաններից կարիքավոր ընտանիքների 13-ից 18 տարեկան հայորդիներին և նրանց առաջնորդող թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տեր Նարեկ վարդապետ Ավագյանին, արժանապատիվ Տեր Վիլեն քահանա Ղազարյանին և արժանապատիվ Տեր Լևոն քահանա Հովհաննիսյանին հյուրընկալեցին և կեցության, սննդի, զբոսանքի հարցերը հոգացին Աջարիայում գործող ART Company-ի ղեկավար Արտյոն Թումանյանը, MGM travel կազմակերպության ղեկավար Գրիգոր Մկրտչյանը, V Gostyx և Edika կազմակերպության ղեկավար Էդուարդ Միքայելյանը, Art and Travel compani տնօրեն Նառա Գալստյանը, Geneva tours կազմակերպության տնօրեն Արայիկ Մարությանը, հյուրերի համար ապահովելով մեկշաբաթյա անհոգ, երջանիկ և ուրախ օրեր:

